«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-239 քաղաքացիական օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1086.1-ին հոդվածով.

«Հոդված 1086.1. Աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վ հատուցումը պետական բյուջեի միջոցների հաշվին՝ գոր հանդիսացող իրավաբանական անձի լուծարման կամ ֆի անձի գործունեության դադարեցման դեպքում

1. Աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ ֆիզիկական անձի գործունեության դադարեցման դեպքում, եթե տուժողը չի ստանում սույն օրենսգրքի 1086-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վճարները՝ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցումը կատարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի միջոցով։
2. Սույն հոդվածով նախատեսված հատուցումը կատարվում է դիմելուն նախորդած երեք տարիների համար միանվագ, և այնուհետ ամենամսյա վճարումների տեսքով։
3. Սույն հոդվածով նախատեսված հատուցման չափերը, կարգը և առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։